	վերաբերյալ տրամադրված տվյալների մշակում, համակարգ ում, արխիվացում, պահպանում և տրամադրում				
<b>Ընդամենը</b>				<b>27,143</b>	

**Ծանոթագրություն 18. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ**

**Բանկը չունի մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:**

**Ծանոթագրություն 19. Ներդրումներ վերահսկվող անձանց կանոնադրական կապիտալում**

**Բանկը չունի ներդրումներ վերահսկվող կազմակերպություններում:**

**Ծանոթագրություն 20. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ**

**Հիմնական միջոցներ**

6411600

Հոդվածի անվանումը	Շենքեր	Համակարգիչներ և կապի միջոցներ	Փոխադրամիջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Հիմնական միջոցների գծով կապիտալ ներդրումներ	Վարձակալված հիմնական միջոցների գծով կապիտալ ներդրումներ	Ընդամենը
<b>Սկզբնական արժեք</b>							
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում							
	2468591	1004050	358493	2087458		374396	6292988
Ավելացում	800231	173869	1927	596279		13428	1585734
Օտարում		107113	64606	305225		2607	479551
Վերագնահատում							
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում	3268822	1070806	295814	2378512		385217	7399171
Ավելացում	41289	35937	292	98165		8115	183798
Օտարում		45231		40298			85529
Վերագնահատում							
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	3310111	1061512	296106	2436379		393332	7497440
<b>Կուտակված մաշվածություն</b>							
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում		656090	114129	1134201		82601	1987021
Ավելացում	56878	88498	40552	201212		4756	391896
Օտարում		57834	37344	27025			122203
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում							
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում	56878	686754	117337	1308388		87357	2256714
Ավելացում	17094	37512	9656	57454		1630	123346
Օտարում		32938		7354			40292
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում							
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	73972	691328	126993	1358488		88987	2339768
<b>Ջուտ հաշվեկշռային արժեք</b>							
հաշվետու ժամանակաշրջանի վերջում	3236139	370184				304345	5157672
նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջում			169113	1077891			
	3211944	384052	178477	1070124		297860	5142457

**Ոչ նյութական ակտիվներ**

Հոդվածի անվանումը	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ և վստահագրեր	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
<b>Սկզբնական արժեք</b>				
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում	240783	766580	100433	1107796
Ավելացում	203742	188606		392348
Օտարում				
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում	444525	955186	100433	1500144
Ավելացում	18415	350		
Օտարում				
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	462940	955536	100433	1518909
<b>Կուտակված մաշվածություն</b>				
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում	48484	69100	54695	172279
Ավելացում	20510	51097	2388	73995

Օտարում	912			912
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում	68082	120197	57083	245362
Ավելացում	4191	14838	589	
Օտարում				
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	72273	135035	57672	264980
<b>Զուտ հաշվեկշռային արժեք</b>				
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում	390667	820501	42761	1253929
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջում	376443	834989	43350	1254782

**Ծանոթագրություն 21. Այլ ակտիվներ**

	31.03.15	31.12.14
Բանկային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Այլ գործառնություններից ստացվելիք գումարներ	-	-
<b>Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ</b>	<b>-</b>	<b>-</b>
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	93	148
Կանխավճարներ աշխատակիցներին	17	39
Դեպոնացված միջոցներ այլ կազմակերպություններում	500	500
Կանխավճարներ մատակարարներին	633,346	622,101
Կանխավճարներ/գերավճար/ բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով	512,870	538,448
Այլ դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	5,480	4,420
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>1,152,306</b>	<b>1,165,656</b>
Այլ ակտիվների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 7)	-	-
<b>ԸՆդամենը դեբիտորական պարտքեր և կանխավճարներ</b>	<b>1,152,306</b>	<b>1,165,656</b>
Այլ ակտիվներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Արագամաշ առարկաներ	105,817	107,306
ակտիվներ	3,590,322	3,409,764
Շահագործումից դուրս գտնվող ակտիվներ	48,283	51,634
Ապագա ժամանակաշրջանի ծախսեր	237,413	282,988
Այլ ակտիվներ	3,981,835	3,851,692
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>-</b>	<b>-</b>
Այլ ակտիվների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 7)	-	-
<b>ԸՆդամենը այլ ակտիվներ</b>	<b>3,981,835</b>	<b>3,851,692</b>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>5,134,141</b>	<b>5,017,348</b>

**Ծանոթագրություն 22. Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ**

	<b>31.03.15</b>	<b>31.12.14</b>
<b>Ընթացիկ հաշիվներ</b>	<b>Հաշվետու ժամանակաշրջան</b>	<b>Նախորդ ժամանակաշրջան</b>
Այլ բանկերի թղթակցային հաշիվներ	998,186	982,073
Հաշվեգրված տոկոսներ	13	13
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>998,199</b>	<b>982,086</b>
<b>Միջբանկային վարկեր և ավանդներ, այլ</b>	<b>Հաշվետու ժամանակաշրջան</b>	<b>Նախորդ ժամանակաշրջան</b>
Ստորադաս փոխառություն ՀՀ կենտրոնական բանկ		
ՀՀ կենտրոնական բանկ	4,787,000	4,850,000
ռեպո (հետգնման) պայմանագրեր		
ՀՀ բանկեր	466,836	1,867,430
վարկեր և ավանդներ		
այլ		
ռեպո (հետգնման) պայմանագրեր		
այլ		
Հաշվեգրված տոկոսներ	3,299	12,041
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>5,257,135</b>	<b>6,729,471</b>
<b>Ֆինանսական կազմակերպություններ</b>	<b>Հաշվետու ժամանակաշրջան</b>	<b>Նախորդ ժամանակաշրջան</b>
Ընթացիկ հաշիվներ	116,658	52,112
Վարկեր և ավանդներ	21,090,016	26,373,226
Հաշվեգրված տոկոսներ	242,471	300,516
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>21,449,145</b>	<b>26,725,854</b>
<b>Ընդամենը պահանջներ բանկերի և միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ</b>	<b>27,704,479</b>	<b>34,437,411</b>

**Ծանոթագրություն 23. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ**

	31.03.15	31.12.14
<b>ՀՀ կառավարության և տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ</b>	<b>Հաշվետու ժամանակաշրջան</b>	<b>Նախորդ ժամանակաշրջան</b>
Վարկեր	780,564	876,060
այլ	5,346	4,288
Հաշվարկված տոկոսներ	8,949	1,534
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>794,859</b>	<b>881,882</b>
<b>ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձանց, հիմնարկների նկատմամբ</b>	<b>Հաշվետու ժամանակաշրջան</b>	<b>Նախորդ ժամանակաշրջան</b>
Ընթացիկ հաշիվներ	2,843,987	4,584,806
Ժամկետային ավանդներ	3,693,575	3,030,680
Հաշվարկված տոկոսներ	57,674	30,292
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>6,595,236</b>	<b>7,645,778</b>
<b>Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց, հիմնարկների նկատմամբ</b>	<b>Հաշվետու ժամանակաշրջան</b>	<b>Նախորդ ժամանակաշրջան</b>
Ընթացիկ հաշիվներ	378,817	4,584,881
Ժամկետային ավանդներ	17,850,607	14,080,686
Հաշվարկված տոկոսներ	456,960	101,092
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>18,686,384</b>	<b>18,766,659</b>
<b>ՀՀ ռեզիդենտ անհատ ձեռնարկատերերի նկատմամբ</b>	<b>Հաշվետու ժամանակաշրջան</b>	<b>Նախորդ ժամանակաշրջան</b>
Ընթացիկ հաշիվներ	135,483	114,138
Ժամկետային ավանդներ	9,479	5,001
Հաշվարկված տոկոսներ	110	3
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>145,072</b>	<b>119,142</b>
<b>Ոչ ռեզիդենտ անհատ ձեռնարկատերերի նկատմամբ</b>	<b>Հաշվետու ժամանակաշրջան</b>	<b>Նախորդ ժամանակաշրջան</b>
Ընթացիկ հաշիվներ	-	-
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>-</b>	<b>-</b>
<b>ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց նկատմամբ</b>	<b>Հաշվետու ժամանակաշրջան</b>	<b>Նախորդ ժամանակաշրջան</b>
Ընթացիկ հաշիվներ	4,837,793	5,014,962
Ժամկետային ավանդներ	77,518,364	74,819,751
Հաշվարկված տոկոսներ	1,694,873	1,498,948
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>84,051,030</b>	<b>81,333,661</b>
<b>Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց նկատմամբ</b>	<b>Հաշվետու ժամանակաշրջան</b>	<b>Նախորդ ժամանակաշրջան</b>
Ընթացիկ հաշիվներ	663,396	348,467
Ժամկետային ավանդներ	4,025,856	4,509,156
Հաշվարկված տոկոսներ	99,393	104,150
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>4,788,645</b>	<b>4,961,773</b>
<b>Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ</b>	<b>115,061,226</b>	<b>113,708,895</b>



**Ծանոթագրություն 24. Բանկի կողմից թողարկված արժեթղթեր**

**Բանկը չունի թողարկված արժեթղթեր**

**Ծանոթագրություն 25. Առևտրային նպատակներով պահվող պարտավորություններ**

**Բանկը չունի առևտրային նպատակներով պահվող պարտավորություններ**

Ծանոթագրություն 26. Վճարվելիք գումարներ

Վճարվելիք գումարներ	31.03.15	31.12.14
	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Այլ	-	-
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>-</b>	<b>-</b>

**Ծանոթագրություն 27. Այլ պարտավորություններ**

Այլ պարտավորություններ	31.03.15	31.12.14
	Չաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Այլ հաշվարկների գծով		-
Վճարվելիք շահաբաժիններ	384,120	-
<b>Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով</b>		
Ակրեդիտիվների գծով		
շահութահարկի գծով	296,243	196,515
ԱԱՀ-ի գծով	16,769	6,256
այլ հարկերի ու տուրքերի գծով	188,656	287,151
սոցիալական ապահովագրության վճարումների գծով	7,278	7,224
Ավանդների ապահովագրության գծով	43,856	44,460
Ապագա ժամանակաշրջանի եկամուտ	13,985	43,143
Պարտավորություններ աշխատակիցների նկատմամբ աշխատավարձի գծով	238,329	221,902
Կրեդիտորական պարտքեր մատակարարների նկատմամբ	53,382	54,173
Այլ պարտավորություններ	134,336	1,996
	<b>1,376,954</b>	<b>862,820</b>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		

**Ծանոթագրություն 28. Կանոնադրական կապիտալ**

- 1) բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում է 13,100,700 հազ. դրամ
- 2) բանկի թողարկած և տեղաբաշխած սովորական բաժնետոմսերի քանակը – 10000, անվանական արժեքը – 989,970 հազ. դրամ,
- 3) բանկը թողարկել և տեղաբաշխել արտոնյալ բաժնետոմսեր քանակը - 10, անվանական արժեքը - 320,100,000 հազ. դրամ
- 4) առկա չէ բանկի կողմից հետ զնված սեփական բաժնետոմսեր
- 5) հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ բանկի բաժնետերերն են.

Բաժնետերերի անվանումը	Բանկում ունեցած մասնակցության գումարը, հազ. դրամ	Բանկում ունեցած մասնակցության չափը տոկոսային հարաբերությամբ	Մասնակցի գործունեության տեսակը (իրավաբանական անձանց համար)
ՌԻՊԱՏՈՆՍՈ ՀՈԼԴԻՆԳՍ ԼԻՄԻԹԵԴ	9,899,700	75.6%	առևտրային
ՌԻՊԱՏՈՆՍՈ ՀՈԼԴԻՆԳՍ ԼԻՄԻԹԵԴ	3,201,000	24.4%	առևտրային

- 6) հաշվետու ժամանակաշրջանում կանոնադրական կապիտալի ավելացումը, այդ թվում
  - ա. դրամական միջոցներով – առկա է 1.700.000 հազ. դրամ
  - բ. սեփական կապիտալի այլ տարրերի հաշվին- առկա չէ
  - գ. որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների իրագործումից,- առկա չէ
- 7) հաշվետու ժամանակաշրջանում կանոնադրական կապիտալի նվազումը հետ զնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի հաշվին- առկա չէ
- 8) հաշվետու ժամանակաշրջանում բանկի կողմից հաշվարկված և վճարվելիք շահութաբաժիններ - առկա չէ

**Ծանոթագրություն 29. Սեփական կապիտալի այլ տարրեր**

**Բանկը չունի սեփական կապիտալի այլ տարրեր**

**Ծանոթագրություն 30. Պահուստներ, պայմանական դեպքեր և պոտենցիալ պարտավորություններ**

Պահուստներ	Ծանոթ	31.03.15	31.12.14
		Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Սկզբնական մնացորդ	7		
Պահուստին կատարված մասհանումներ		35,448	370,229
Պահուստի օգտագործում		(35,448)	(370,229)
Պահուստին կատարված զուտ մասհանումներ			
<b>Վերջնական մնացորդ</b>		<b>-</b>	<b>-</b>

**30.1 Բանկի իրավական պարտավորությունները**

Բանկը իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և իր իրավական պարտավորությունների գծով լրացուցիչ պահուստավորումների անհրաժեշտություն չկա:

**30.2 Բանկի հարկային պարտավորությունները**

Բանկն ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները, և իր հարկային պարտավորությունների գծով լրացուցիչ պահուստավորումների անհրաժեշտություն չկա:

**30.3 Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների գծով բանկի պայմանական պարտավորությունները**

Պայմանական պարտավորություններ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Չօգտագործված վարկային գծեր	3,774,307	4,935,703
Տրամադրված երաշխիքներ	1,627,171	1,772,728
Տրամադրված ակրեդիտիվներ		-
Նշված հոդվածների գծով պահուստ (ծանոթ. 7)		-
	<b>5,401,478</b>	<b>6,708,431</b>

**30.4 Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով**

Նվազագույն վարձավճարների կառուցվածքը	Արտարժույթին համարժեք դրամով վճարման ենթակա գումարներ	ՀՀ դրամով վճարման ենթակա գումարներ
Մինչև 1 տարի		335,287
1-5 տարի		919,633
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>-</b>	<b>1,254,920</b>

Ծանոթագրություն 31. «Գործարքներ կապակցված կողմերի հետ»

	31.03.15	31.12.14
	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
<b>Պահանջներ այլ բանկերի նկատմամբ</b>		
Մնացորդը առ 1 հունվարի	540,238	235,655
Տարվա ընթացքում ավելացում	18,395,401	135,671,504
Տարվա ընթացքում նվազում	(18,059,225)	(135,366,921)
<b>Մնացորդը 30 հունիսի դրությամբ</b>	876,414	540,238
<b>Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ</b>		
Մնացորդը առ 1 հունվարի	4,865,953	4,084,185
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր և փոխատվություններ	1,191,802	5,687,309
Տարվա ընթացքում մարված վարկեր և փոխատվություններ	(1,034,406)	(4,905,541)
<b>Մնացորդը 30 հունիսի դրությամբ</b>	5,023,349	4,865,953
<b>Պարտավորություններ այլ բանկերի նկատմամբ</b>		
Մնացորդը առ 1 հունվարի	980,793	8,160
Տարվա ընթացքում ավելացում	6,085	1,098,832
Տարվա ընթացքում նվազում	(41,461)	(126,199)
<b>Մնացորդը 30 հունիսի դրությամբ</b>	945,417	980,793
<b>Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ</b>		
Մնացորդը առ 1 հունվարի	859,947	776,754
Տարվա ընթացքում ստացված գումարներ	3,446,117	93,376,026
Տարվա ընթացքում վճարված գումարներ	(3,291,973)	(93,292,833)
<b>Մնացորդը 30 հունիսի դրությամբ</b>	1,014,091	859,947
<b>Բանկի ղեկավարությանը վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ</b>		
Մնացորդը առ 1 հունվարի	52,167	231,998
Պարգևատրում	81,965	345,312
Մնացորդը առ 1 հունվարի	4,460	2,999
Պարգևատրում	15,278	64,305
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>153,870</b>	<b>644,614</b>



**Ծանոթագրություն 32. «Ֆինանսական ռիսկերի վերաբերյալ նվազագույն բացահայտումներ»**

**Ռիսկի կառավարում**

Ռիսկ ասելով Յունիբանկը հասկանում է իրականացված ֆինանսական գործարքների հետևանքով բանկի ռեսուրսների կորուստի, չստացված եկամուտների կամ լրացուցիչ ծախսերի հավանականությունը: Ռիսկի կրումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է, և գործառնական ռիսկերը գործունեության անխուսափելի հետևանքն են: Այդուհանդերձ, Բանկի նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության և նվազագույնի հասցնել Բանկի ֆինանսական վիճակի վրա անցանկալի ազդեցությունները: Բանկի ռիսկերի կանոնադրության և մանրածախ ռիսկերի քաղաքականության, նպատակն է ախտորոշել և վերլուծել ռիսկերը, սահմանել ռիսկի համապատասխան սահմանաչափեր և հսկողություն, և արժանահավատ և նորացված տեղեկատվական համակարգերի միջոցով վերահսկել ռիսկերը և սահմանաչափերի պահպանումը: Բանկը պարբերաբար վերանայում է ռիսկերի կանոնադրությունը և մանրածախ ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը շուկայում, ապրանքներում փոփոխություններն արտացոլելու և լավաճային Ռիսկերի կառավարումն իրականացվում է Ռիսկերի Կառավարման Դեպարտամենտի կողմից (Կորպորատիվ ռիսկերի կառավարման վարչություն, Մանրածախ ռիսկերի կառավարման վարչություն, Գործառնական ռիսկերի կառավարման վարչություն, ինֆորմացիոն համակարգերի կառավարման և պորտֆելի վերլուծության վարչություն,) ըստ Բանկի Տնօրենների խորհրդի հաստատած քաղաքականության: ՌԿԴ և Ֆինանսական տնօրինության կողմից ախտորոշվում, գնահատվում և հեջավորվում են ֆինանսական ռիսկերը Բանկի գործառնական միավորների հետ սերտ համագործակցության միջոցով: Բանկի խորհուրդը տրամադրում է սկզբունքներ ռիսկի ամբողջական կառավարման համար, ինչպես նաև քաղաքականություն՝ հատուկ բնագավառների վերաբերյալ, ինչպիսիք են փոխարժեքային ռիսկը, տոկոսադրույթի ռիսկը, վարկային ռիսկը, ածանցյալ և ոչ ածանցյալ ֆինանսական գործիքների կիրառումը: Որպես ապահովում ներքին աուդիտը պատասխանատու է ռիսկի կառավարման անկախ գնահատման և հսկողության ընդհանուր միջավայրի համար: Կարևորագույն ռիսկերն են վարկային ռիսկը, իրացվելիության ռիսկը, շուկայական ռիսկը և գործառնական ռիսկը: Շուկայական ռիսկը ներառում է փոխարժեքների, տոկոսադրույթների և այլ գնային ռիսկերը:

**31.03.15**

Գործառնական ռիսկի հաշվարկ (Հիմնական բնութագրիչների մոտեցում)				
Հաշվետու ժամանակաշրջանից նախորդող 3-րդ տարվա զուտ եկամուտ	Հաշվետու ժամանակաշրջանից նախորդող 2-րդ տարվա զուտ եկամուտ	Հաշվետու ժամանակաշրջանից նախորդող տարվա զուտ եկամուտ	Գործառնական ռիսկ	
1	2	3	4	
3,830,485	1,816,779	4,349,655	499,846	
Վարկային ռիսկ	Շուկայական ռիսկ			Գործառնական ռիսկ
	Արտարժույթային ռիսկ	Տոկոսադրույթի ռիսկ	Կապիտալի գործիքների գնային ռիսկ	
3	4	5	6	7
147,987,801	596,279	413,477	2,940	499,846

## **Վարկային ռիսկ**

կորուստներ կարող է պատճառել: Վարկային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Վարկային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի և փոխառությունների տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ: Ռիսկն առկա է նաև արտհաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները: Վարկային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Բանկի ՌԿԴ կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են *Բանկի խորհրդին/վարչությանը* և

## **Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն**

Բանկը կարգավորում է վարկային ռիսկի մակարդակները՝ մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև վարկավորման ճյուղային կամ աշխարհագրական սեգմենտների գծով ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր սահմանելով:

Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և դրանց կառավարումը ենթակա է վերանայման տարեկան կամ ավելի հաճախակի կտրվածքով: Ըստ ապրանքատեսակների, տնտեսության ճյուղերի և երկրների վարկային ռիսկի սահմանաչափերը հաստատվում են և անհրաժեշտության դեպքում վերանայվում են Բանկի խորհրդի կողմից:

պարբերաբար վերլուծելով և անհրաժեշտության դեպքում վարկի տրամադրման սահմանաչափերը փոխելով՝ համաձայն Բանկի ներքին կանոնակարգվածության պահանջների:

Ներքևում ներկայացված են հատուկ հսկողության և զսպողական մի քանի այլ միջոցներ:

## **Գրավ**

միջոցներից մեկն է համարվում տրամադրված դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելը: Բանկը կանոններ է սահմանում գրավի հատուկ տեսակների ընդունելի լինելու կամ ռիսկերի զսպման վերաբերյալ: Վարկերի և փոխառությունների համար գրավի հիմնական տեսակներն են.

- Հիփոթեքային պայմանագրերով գրավադրվող անշարժ գույքը,
- Ավտոմեքենայի կոշտ գրավի պայմանագրերով գրավադրվող շարժական գույքը,
- Ֆիզիկական անձանց պատկանող այլ գույք,
- Կազմակերպությունների գործառնական ակտիվները՝ շենքերը, այլ հիմնական միջոցներ, պաշարները,
- Ֆինանսական գործիքները՝ պարտքային և բաժնային արժեղիքները:

Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Բանկը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի և փոխառությունների արժեզրկման հատկանիշներ են նկատվում:

Վարկեր և փոխառություններից տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով:

## **Վարկային ռիսկ պարունակող պայմանական պարտավորություններ**

ակրեդիտիվները ենթակա են նույն վարկային ռիսկին, ինչ վարկերը: Ապրանքային և թղթային ակրեդիտիվները՝ Բանկի գրավոր հավաստումներն են հաճախորդների անունից, որոնք թույլ են տալիս երրորդ անձանց գումարներ ստանալ բանկից հատուկ պայմանների կատարման դեպքում, ապահովված են դրանց հետ կապված ապրանքների առաքմամբ և հետևաբար դրանք ավելի ապահով են, քան ուղղակի տրամադրվող վարկերը:

Վարկի տրամադրման պայմանական պարտավորություններն իրենցից ներկայացնում են վարկային գծերի չօգտագործած մասերը:

Այս դեպքում, հնարավոր կորուստների գումարը, որ Բանկը կարող է կրել, հավասար է չօգտագործված վարկային գծերի գումարին:

պարտավորությունները տրամադրվում են վարկառուների կողմից վարկերի տրամադրման որոշակի ստանդարտների պահպանման դեպքում: Բանկը հետևում է պարտավորությունների մարման ժամկետներին, քանի որ երկարաժամկետ պարտավորությունները պարունակում են ավելի բարձր վարկային ռիսկ, քան կարճաժամկետ պարտավորությունները:

## **Արժեզրկում և պահուստավորման քաղաքականություն**

ուշացումները, վարկառուների դրամական հոսքերի հետ կապված դժվարությունները, վարկային ռեյտինգների նվազումները, պայմանագրերի նախնական պայմանների խախտումները: Բանկը արժեզրկման գնահատումը կատարում է անհատապես և խմբային եղանակով:

Արժեզրկման անհատական գնահատում

հիմքով: Պահուստի գումարի որոշման ժամանակ հաշվի առնվող գործոններից են վարկառուի բիզնես ծրագրի վստահելիությունը, ֆինանսական դժվարությունները հաղթահարելու կարողությունը, ծրագրված հատույթները և սպասվող շահաբաժինների վճարումները անվճարունակության դեպքում, այլ ֆինանսական օգնության հնարավորությունը, գրավի իրացվելի արժեքը, սպասվող դրամական հոսքերի ժամկետները: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե չկանխատեսված հանգամանքները չեն պահանջում հատուկ ուշադրություն:

Արժեզրկման խմբային գնահատում

Խմբային գնահատումը կատարվում է ոչ նշանակալի վարկերի գծով (ներառյալ կրեդիտ քարտերը, հիպոթեքները և չապահովված սպառողական վարկերը), ինչպես նաև անհատապես նշանակալի վարկերի և փոխառությունների գծով, որոնց համար դեռ չկան արժեզրկման ակնհայտ հատկանիշներ: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ դասակարգված յուրաքանչյուր խմբի համար առանձին:

Խմբային գնահատումը հաշվի է առնում այն արժեզրկման գումարը, որը հնարավոր է առաջանա պորտֆելում, նույնիսկ եթե անհատական գնահատման մեջ արժեզրկման օբյեկտիվ վկայություն չկա: Արժեզրկման կորուստները գնահատվում են հաշվի առնելով հետևյալ տեղեկատվությունը՝ պորտֆելում կորուստների պատմությունը, ընթացիկ տնտեսական իրավիճակը, կորուստն առաջանալու և անհատապես բացահայտվելու մոտավոր ժամկետը, արժեզրկման դեպքում սպասվող վճարումները:

Ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների արժեզրկման գնահատումը և պահուստավորումն իրականացվում է նույն կերպ՝ ինչ

**Աշխարհագրական կենտրոնացումներ**

Բանկի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների աշխարհագրական կենտրոնացումների վերլուծությունը ունի հետևյալ տեսքը.

Հոդվածի անվանումը	Հաշվետու ժամանակաշրջան 31.03.15				Ընդամենը
	ՀՀ	ԱՊՀ երկրներ	ՏՀԶԿ* երկրներ	Ոչ ՏՀԶԿ երկրներ	
<b>Ակտիվներ</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	33,448,556				33,448,556
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	90,503	906,596	1,428,570	450	2,426,119
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	111,363,376	2,447,662		1 2	113,811,040
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	4,911,880				4,911,880
Այլ ակտիվներ	5,134,141				5,134,141
<b>Ընդամենը ակտիվներ</b>	<b>154,948,456</b>	<b>3,354,258</b>	<b>1,428,571</b>	<b>452</b>	<b>159,731,736</b>
Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածներ	5,344,304	57,173			5,401,477
<b>Պարտավորություններ</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	21,207,065	6,497,414			27,704,479
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	93,929,234	1,943,481	830,860	18,357,651	115,061,226
<b>Ընդամենը պարտավորություններ</b>	<b>115,136,299</b>	<b>8,440,895</b>	<b>830,860</b>	<b>18,357,651</b>	<b>142,765,705</b>
<b>Զուտ դիրք</b>	<b>34,467,853</b>	<b>(5,143,810)</b>	<b>597,711</b>	<b>(18,357,199)</b>	<b>11,564,554</b>

Նախորդ ժամանակաշրջան 31.12.14

Հողվածի անվանումը	ՀՀ	ԱՊՀ երկրներ	ՏՀԶԿ* երկրներ	Ոչ ՏՀԶԿ երկրներ	Ընդամենը
<b>Ակտիվներ</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	30,953,762				30,953,762
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	62,920	564,719	3,544,649	8,326	4,180,614
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	117,964,799	1,988,023	1	2	119,952,825
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	5,030,823				5,030,823
Այլ ակտիվներ	5,017,348				5,017,348
<b>Ընդամենը ակտիվներ</b>	<b>159,029,652</b>	<b>2,552,742</b>	<b>3,544,650</b>	<b>8,328</b>	<b>165,135,372</b>
Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածներ	6,691,740	16,691			6,708,431
<b>Պարտավորություններ</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	26,751,434	7,685,644	333		34,437,411
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	92,365,958	1,467,791	1,413,477	18,461,669	113,708,895
<b>Ընդամենը պարտավորություններ</b>	<b>119,117,392</b>	<b>9,153,435</b>	<b>1,413,810</b>	<b>18,461,669</b>	<b>148,146,306</b>
<b>Զուտ դիրք</b>	<b>33,220,520</b>	<b>(6,617,384)</b>	<b>2,130,840</b>	<b>(18,453,341)</b>	<b>10,280,635</b>

Վարկային ռիսկ պարունակող ակտիվների վերլուծությունը ըստ տնտեսության սեգմենտների և ռիսկայնության ուճի հետևյալ տեսքը.

Հաշվետու ժամանակաշրջան 31.03.15					
Ակտիվներ	Աշխատող ակտիվներ	Չաշխատող ակտիվներ			
		Ստանդարտ/ Ոչ ռիսկային	Հսկվող/ Ռիսկային	Ոչ ստանդարտ/Միջի ն ռիսկային	Կասկածելի/ Բարձր ռիսկային
<b>Վարկեր, այդ թվում՝</b>	110,600,273	1,512,111	1,501,441	4,273,749	6,613,745
1. Արդյունաբերություն	9,752,983	2,500	91,775	952,803	162,184
2. Գյուղատնտեսություն	737,919	320		19,354	2,657
3. Շինարարություն	4,542,639			96,472	16,465
4. Տրանսպորտ և կապ	3,691,284	216,180	38,345	231,113	366,566
5. Առևտուր	21,955,161	538,257	441,042	1,435,770	1,730,266
6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ուղղություններ	8,101,115	5,476	90,187	123,938	35,162
7. Ֆինանսական հատված					
8. Սպառողական վարկեր, այդ թվում՝	51,243,192	739,549	836,615	1,264,488	4,115,835
8.1 անշարժ գույքի գրավով	22,294,835	98,909	173,484	672,957	1,403,563
8.2 ավտոմեքենայի գրավով	2,112,973	17,574	6,343	45,157	551,865
9. Տնտեսության այլ ճյուղեր	7,973,100	9,829	3,477	149,811	174,703
10. Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկեր	2,602,880				9,907

**Նախորդ ժամանակաշրջան  
31.12.14**

Ակտիվներ	Աշխատող ակտիվներ	Չաշխատող ակտիվներ			
	Ստանդարտ/ Ոչ ռիսկային	Հսկվող/ Ռիսկային	Ոչ ստանդարտ/Միջի ն ռիսկային	Կասկածելի/ Բարձր ռիսկային	Անհուսալի
<b>Վարկեր, այդ թվում՝</b>	106,466,189	7,585,813	1,874,423	4,507,775	5,109,142
1. Արդյունաբերություն	9,257,698	757,851	45,365	1,000,373	112,543
2. Գյուղատնտեսություն	756,537	12,328	9,684	19,941	2,679
3. Շինարարություն	4,579,311	5,902		297,180	13,457
4. Տրանսպորտ և կապ	3,905,896	58,790	208	367,532	244,815
5. Առևտուր	21,740,947	1,619,811	953,117	1,190,071	1,354,772
6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ուղղություններ	4,414,886	3,650,079	3,240	192,560	1,245
7. Ֆինանսական հատված					
8. Սպառողական վարկեր, այդ թվում՝	51,038,486	1,122,203	853,729	1,255,014	3,355,064
8.1 անշարժ գույքի գրավով	23,102,254	542,192	394,538	542,192	1,150,315
8.2 ավտոմեքենայի գրավով	2,518,394	39,130	19,926	22,135	526,121
9. Տնտեսության այլ ճյուղեր	8,237,802	344,829	9,080	185,104	14,579
10. Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկեր	2,534,626	14,020			9,988

Վարկային պորտֆելի վերլուծությունը ըստ տարածաշրջանների և ռիսկայնության ունի հետևյալ տեսքը.

Հաշվետու ժամանակաշրջան 31.03.15					
Ակտիվներ	Աշխատող ակտիվներ	Չաշխատող ակտիվներ			
	Ստանդարտ/ Ոչ ռիսկային	Հսկվող/ Ռիսկային	Ոչ ստանդարտ/Միջին ռիսկային	Կասկածելի/ Բարձր ռիսկային	Անհուսալի
<b>Վարկեր, այդ թվում՝</b>					
1. ՀՀ ռեզիդենտներին	107,997,393	1512111	1,501,441	4,273,749	6,603,838
2. ԱՊՀ երկրների ռեզիդենտներին	2,602,880				9,907
<b>Ընդամենը</b>	<b>110,600,273</b>	<b>1,512,111</b>	<b>1,501,441</b>	<b>4,273,749</b>	<b>6,613,745</b>

Նախորդ ժամանակաշրջան 31.12.14					
Ակտիվներ	Աշխատող ակտիվներ	Չաշխատող ակտիվներ			
	Ստանդարտ/ Ոչ ռիսկային	Հսկվող/ Ռիսկային	Ոչ ստանդարտ/Միջին ռիսկային	Կասկածելի/ Բարձր ռիսկային	Անհուսալի
<b>Վարկեր, այդ թվում՝</b>					
1. ՀՀ ռեզիդենտներին	103,931,563	7571793	1,874,423	4507775	5,099,154
2. ԱՊՀ երկրների ռեզիդենտներին	2,534,626	14020			9,988
<b>Ընդամենը</b>	<b>106,466,189</b>	<b>7,585,813</b>	<b>1,874,423</b>	<b>4,507,775</b>	<b>5,109,142</b>

- վարկերի գծով պահուստաֆորմ/ընդհանուր վարկեր – 3.45 %
- չաշխատող վարկեր/ ընդհանուր վարկեր –6.18 %
- չաշխատող վարկերի պահուստ/ընդհանուր կապիտալ – 34.54 %
- հնարավոր կորուստների հատուկ պահուստ/ չաշխատող վարկեր – 41.45 %
- շահույթի ծածկման գործակից = (զուտ գործառնական եկամուտներ + պահուստի ստեղծման ծախսեր) / վարկերից զուտ կորուստ – 35.34%
- վարկային ռիսկով ճշգրտված զուտ տոկոսային մարժա = (տոկոսային եկամուտ- տոկոսային ծախսեր – վարկերի գծով կորուստ)/վարկային ներդրումներ – 1.84 %

**Շուկայական ռիսկ**

*Շուկայական ռիսկի վերլուծություն*

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Շուկայական ռիսկը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծությունների օգնությամբ:

**Շուկայական ռիսկ – Ոչ առևտրային**

**Արտարժույթի ռիսկ**

Բանկի ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքի վրա ազդեցություն են թողնում օգտագործվող արտարժույթի փոխարժեքի տատանումները: Բանկի ղեկավարության կողմից սահմանաչափեր են սահմանվում տարբեր արտարժույթների զծով: Այդ սահմանաչափերը համապատասխանում են ԲՀ ԿԲ-ի կողմից սահմանված նվազագույն պահանջներին:

*Բանկի կողմից ներկայացվում է բանկի արտարժույթի ռիսկի վերլուծությունը ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների.*

**Հաշվետու ժամանակաշրջան 31.03.15**

Գողվածի անվանումը	ԲՀ դրամ	I խմբի	II խմբի	Ընդամենը
		արտարժույթ*	արտարժույթ**	
<b>Ակտիվներ</b>				
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ԲՀ ԿԲ-ում	18,540,306	14,477,385	430,865	33,448,556
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	4,173	1,787,741	634,205	2,426,119
Զանախորդներին տրված վարկեր և փոխառություններ	40,596,806	73,126,605	87,629	113,811,040
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	4,682,158	229,722		4,911,880
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	11,526,457	15,020	4,264	11,545,741
Այլ	75,349,900	89,636,473	1,156,963	166,143,336
<b>Ընդամենը ակտիվներ</b>				
<b>Պարտավորություններ</b>	<b>ԲՀ դրամ</b>	<b>I խմբի</b>	<b>II խմբի</b>	<b>Ընդամենը</b>
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	7,149,636	20,552,628	2,215	27,704,479
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	42,539,440	71,378,179	1,143,607	115,061,226
Այլ պարտավորություններ	2,270,578	5,394	5,585	2,281,557
Այլ պարտավորություններ	51,959,654	91,936,201	1,151,407	145,047,262
<b>Ընդամենը պարտավորություններ</b>	<b>23,390,246</b>	<b>(2,299,728)</b>	<b>5,556</b>	<b>21,096,074</b>
<b>Զուտ դիրք</b>				



**Նախորդ ժամանակաշրջան 31.03.14**

<b>Չողվածի անվանումը</b>	<b>ՀՀ դրամ</b>	<b>I խմբի արտաժույթ*</b>	<b>II խմբի արտաժույթ **</b>	<b>Ընդամենը</b>
<b>Ակտիվներ</b>				
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	16,278,898	6,385,381	468,417	23,132,696
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	7,817	2,237,035	118,455	2,363,307
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	41,731,692	71,636,110	203,135	113,570,937
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	5,186,662			5,186,662
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	9,498,237	141,936	5,444	9,645,617
Այլ	72,703,306	80,400,462	795,451	153,899,219
<b>Ընդամենը ակտիվներ</b>				
<b>Պարտավորություններ</b>				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	4,401,229	6,812,344	3,184	11,216,757
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	42,856,496	75,536,703	797,556	119,190,755
Այլ պարտավորություններ	1,701,701	25,543	2,825	1,730,069
Ընդամենը պարտավորություններ	48,959,426	82,374,590	803,565	132,137,581
<b>Զուտ դիրք</b>	<b>23,743,880</b>	<b>(1,974,128)</b>	<b>(8,114)</b>	<b>21,761,638</b>

I խմբի արտաժույթը ներկայացնում է հիմնականում ԱՄՆ դոլարը, ներառյալ երկրների արժույթները:

II խմբի արտաժույթի կազմում ներկայացված են ԱՊՀ երկրների արժույթները:

**Տոկոսադրույքի ռիսկ**

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Բանկի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: Բանկի Տնօրենների Խորհուրդը սահմանել է որոշված ժամկետների համար տոկոսադրույքների մեղքվածքների չափ: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով, և հեջավորման ռազամվարություն է օգտագործվում դրանք սահմանված շրջանակներում պահելու համար:

*Բանկը չունի տոկոսաբեր/տոկոսակիր ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ փոփոխվող տոկոսադրույքներով*

**Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ տոկոսաբեր/տոկոսակիր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար գործող միջին տոկոսադրույքներն են.**

Հոդվածի անվանումը	Հաշվետու ժամանակաշրջանի տոկոսադրույքներ		Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի տոկոսադրույքներ	
	ՀՀ դրամ	Արտարժույթ	ՀՀ դրամ	Արտարժույթ
	%	%	%	%
<b>Ակտիվներ</b>	X	X	X	X
Մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	-	-	-	-
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ, այդ թվում՝	-	-	-	-
- միջբանկային վարկեր	-	-	-	-
- միջբանկային ռեպո	-	-	-	-
- միջբանկային տոկոսային սվոպ	-	-	-	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	20.1	13.0	19.9	12.9
Առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթեր	10.1	-	10.1	-
<b>Պարտավորություններ</b>	X	X	X	X
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	7.30	6.90	7.80	4.75
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	14.30	7.80	9.21	6.15

## **Գնային ռիսկ**

Գնային ռիսկն այն ներկա կամ ապագա հավանականությունն է, որ շուկայում արժեթղթերի և բանկի հաշվեկշռում առկա այլ ֆինանսական գործիքների գների փոփոխությունը բացասաբար կազդի բանկի շահույթի և/կամ կապիտալի վրա:  
Գնային ռիսկի սահմանափակման համար տարբեր գործիքների գծով սահմանվում են սահմանաչափեր և իրականացվում է պարբերական մոնիտորինգ:



Նախորդ ժամանակաշրջան 31.03.14										
Հոդվածի անվանումը	Չաշխատող		Մարմանը մնացել է						Անժամկետ	Ընդամենը
	ժամկետային	ժամկետային	ցպահանջ	մինչև 3 ամիս	3-ից մինչև 6 ամիս	6-ից մինչև 12 ամիս	1-ից մինչև 5 տարի	5 տարուց ավելի		
<b>Ակտիվների մարման ժամկետայնության վերաբերյալ</b>										
Կանխիկ և կանխիկի հավասարեցված դրամական միջոցներ, մնացորդներ ՀՀ ԿԲ-ում			22,988,587						90,000	23,078,587
Թանկարժեք մետաղներ			54,109							54,109
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ			1,391,832	330,648					628,164	2,350,644
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	1,234,899	6,387,165		13,374,791	9,524,053	14,785,841	49,617,991	14,352,671		109,277,411
Վրժարքեր, այդ թվում - վաճառքի համար մատչելի						62670	3,852,778	1,179,232		5,094,680
- ռեպո համաձայնագրով վաճառված Այլ պահանջներ			423,265	276		434,469			27,644	885,654
Պայմանագրային պարտավորություններ***	622,469	117,088		1,718,791	62,157	94,153	46,012	31		2,660,701
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>1,857,368</b>	<b>6,504,253</b>	<b>24,857,793</b>	<b>15,424,506</b>	<b>9,586,210</b>	<b>15,377,133</b>	<b>53,516,781</b>	<b>15,531,934</b>	<b>745,808</b>	<b>143,401,786</b>
<b>Այդ թվում՝ I խմբի արտարժույթով</b>	296,659	3,927,053	7,739,960	10,014,377	4,734,500	6,227,093	33,958,025	13,598,102	628,164	81,123,933
<b>II խմբի արտարժույթով</b>			590,717	24,772	41,250	68,470	70,696			795,905
<b>Այդ թվում՝ Փոփոխվող տոկոսադրույքներով</b>										-
<b>Ֆիքսված տոկոսադրույքներով Անտոկոս</b>	1,234,899	6,387,165	10,838	13,705,439	9,524,053	14,848,511	53,470,769	15,531,903	745,808	114,713,577
			24,846,955	276			434469			26,027,508
										-
<b>Պարտավորությունների մարման ժամկետայնության վերաբերյալ</b>										
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ			103,648	3,932,125	2,901,570	701,973	2,880,358	611,851		11,131,525
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ, այդ թվում - ցպահանջ ավանդներ			10,802,913							10,802,913
- ժամկետային ավանդներ				42,577,000	25,318,135	28,343,509	21,208	6,265,499		102,525,351
Պարտավորություններ բանկերի կողմից թողառված արժեթղթերի զօծով										-
Այլ պարտավորություններ			475,342	322,383	384,306	2,387,698	470,150	309,902		4,349,781
Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ		103,194		1,310,152	985,818	1,564,317	1,461,490	1,523,873		6,948,844
Պայմանագրային պարտավորություններ***				1,019,637	554,001	590,279	6,637	2,747		2,173,301
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>-</b>	<b>103,194</b>	<b>11,381,903</b>	<b>49,161,297</b>	<b>30,143,830</b>	<b>33,587,776</b>	<b>4,839,843</b>	<b>8,713,872</b>	<b>-</b>	<b>137,931,715</b>
<b>Այդ թվում՝ I խմբի արտարժույթով</b>	-	-	4,435,347	32,315,226	18,407,113	20,683,607	25,576	6,518,887		82,385,756
<b>II խմբի արտարժույթով</b>	-	-	94,127	263,337	273,320	172,778				803,562
<b>«Խոշոր» պարտավորություններ*</b>	-	-	8,392			11,625,506		6,199,650		17,833,548
<b>Այդ թվում՝ Փոփոխվող տոկոսադրույքներով</b>	-	-								-
<b>Ֆիքսված տոկոսադրույքներով Անտոկոս</b>	-	-	10,857,007	46,468,643	28,604,011	31,433,180	3,371,716	7,187,252	-	127,921,809
	-	-	524,896	362,865						887,761
<b>Զուտ իրացվելիության ճեղքվածք</b>	<b>1,857,368</b>	<b>6,401,059</b>	<b>13,475,890</b>	<b>(33,736,791)</b>	<b>(20,557,620)</b>	<b>(18,210,643)</b>	<b>48,676,938</b>	<b>6,818,062</b>	<b>745,808</b>	<b>5,470,071</b>
<b>Այդ թվում՝ I խմբի արտարժույթով</b>	296,659	3,927,053	3,304,613	(22,300,849)	4,471,163	(14,456,514)	33,932,449	7,079,215	628,164	(1,261,823)
<b>II խմբի արտարժույթով</b>	-	-	496,590	(238,565)	(232,070)	(104,308)	70,696	-	-	(7,657)
<b>Այդ թվում՝ Փոփոխվող տոկոսադրույքներով</b>	-	-	-	-	-	-	-	-	-	-
<b>Ֆիքսված տոկոսադրույքներով</b>	1,234,899	(4,469,842)	(46,457,805)	(14,898,572)	(21,909,127)	(16,584,669)	50,099,053	8,344,651	-	(13,208,232)
<b>Կուտակային իրացվելիության ճեղքվածք</b>	<b>1,857,368</b>	<b>8,258,427</b>	<b>21,734,317</b>	<b>(12,002,474)</b>	<b>(32,560,094)</b>	<b>(50,770,737)</b>	<b>(2,093,799)</b>	<b>4,724,263</b>	<b>5,470,071</b>	

Իրացվելիության ռիսկը կապված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպան ճապատակով Բանկը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ի լրումն իր հիմնական ավանդային բազայի, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Բանկը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բացի այդ Բանկը 33 կենտրոնական բանկում պահում է իր որոշ դրամով պարտավորությունների 2%-ի և որոշ արտարժույթով պարտավորությունների 20%-ի չափով պահուստավորման գումար: Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ մասնավորապես: Բանկի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Բանկը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները 33 կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան: Այդ ցուցանիշներն են.

--- Ընդհանուր իրացվելիություն (L21), որը հաշվարկվում է ամսական կտրվածքով, որպես բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների միջին օրական գումարների միջև սահմանային հարաբերակցություն: 2015թ մարտի համար այն կազմել է 23.14 %:

--- Ընթացիկ իրացվելիություն (L22), որը հաշվարկվում է ամսական կտրվածքով, որպես բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջին օրական գումարների միջև սահմանային հարաբերակցություն: 2015թ.մարտի համար այն կազմել է 335.48 %:

\* ««խոշոր» պարտավորություններ» տողում լրացվում են բոլոր այն պարտատերերի նկատմամբ բանկի պարտավորությունների (ներառյալ տոկոսագումարները) գումարները, որոնց անհատական պահանջների հանրագումարները բանկի նկատմամբ գերազանցում են բանկի ընդհանուր պարտավորությունների 5% սահմանաչափը առանց հաշվի առնելու փոխկապակցվածությունը:

**Ծանոթագրություն 33. «Կապիտալ և կապիտալի համարժեքություն»**

Նորմատիվներ	ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	31.12.14	31.01.15	28.02.15	31.03.15
Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը	5,599,700	11,400,700	11,400,700	11,400,700	11,400,700
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	5,000,000	22,001,446	20,547,554	20,065,528	20,513,686
Ն1 Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	12.00	13.34	12.35	12.22	12.77
Շենքերի և շինությունների վերագնահատման պահուստ---	264,407				
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթ ---	(800,966)				

2) բանկում առկա կապիտալի մակարդակի նկատմամբ սահմանված ներքին պահանջները հանրակրթում են ՀՀ ԿԲ պահանջների հետ և բանկը հաշվետու ժամանակաշրջանում կատարել է կապիտալի մակարդակի համար ղեկավարության կողմից սահմանված ներքին պահանջները

3) բանկը հաշվետու ժամանակաշրջանում կատարել է կապիտալի մակարդակի համար սահմանված նորմատիվային պահանջները

**Ակտիվների և հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների անավարտ ժամկետային գործառնությունների ռիսկի կշիռները**

	0	10	20	30	50	75	100	110	150
Ակտիվներ	43,296,447	348,773	1,464,189	11,307	111,221	27,069,368	21,643,899	3,388,385	68,612,711
Հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների անավարտ ժամկետային գործառնությունների	329,175					582,219	965,187	109,019	1,948,151

Բանկը իր հաշվառման համակարգում հետհաշվեկշռային պարտավորությունների ծավալը որոշում է հիմնարկի կողմից սահմանված ծավալի հիմամբ: Եթե բանկը իր ակտիվների դասակարգումը և կորուստների պահուստների ձևավորումը իրականացնելը համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի կողմից բանկերի համար հաստատված ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի համաձայն պահուստների մեծությունը կլինի:

Հաշվապահական հաշվեկշիռ	31/03/15	31/12/14
Վարկերի, դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստ	(4,090,987)	(5,440,066)
Հետհաշվեկշռային հոդվածների գծով պահուստ	-	-
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	31/03/15	31/12/14
Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում պահուստներից կատարված զուտ մասհանումներ	(137,375)	(3,025,507)

### **Ծանոթագրություն 34. «Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեք»**

#### *Պահանջներ և պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ*

Մեկ ամիս նարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների նարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի նարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապա֊ա դրամական հոսքերի հաշվարկից ելնելով և զեղծվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

#### *Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ*

Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են ելնելով ակնկալվող ապա֊ա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղծվում են նման վարկային ռիսկ և նարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Իրական արժեքը մոտ է հաշվեկշիռային արժեքին, քանի որ ընթացիկ տոկոսադրույքները նոր գործիքների համար արտահայտում են նախկինում տրամադրված գործիքների տոկոսադրույքները:

#### *Այլ փոխառություններ*

Ֆիքսված և չզնանշվող տոկոսադրույքներով դեպոզիտների և փոխառությունների գնահատված իրական արժեքը սահմանվում է, ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղծվում են նմանատիպ նարման ժամկետ ունեցող նոր պարտքային գործիքների տոկոսադրույքներով:



### **Ծանոթագրություն 35 «Կանխատեսվող ապագա գործարքների հեջավորում»**

Բանկը կանխատեսվող արտարժույթային ապագա գործարքները որպես կանոն հեջավորում է սվոպ տիպի ֆինանսական գործիքներով, որոնց ժամանակահատվածը հիմնականում ընկած է մեկից երեք ամիս միջակայքում: Հեջավորված գործիքների գծով հետաձգված կան չճանաչված շահույթի կան կորստի գումարը ակնկալվում է, որ կհակադարձի կանխատեսվող գործարքների գծով սպասվելիք վնասները, իսկ ժամանակահատվածը համընկնում է կանխատեսվող ապագա գործարքների ժամանակահատվածի հետ:

## **Ծանոթագրություն 36. «Ապաճանաչում»**

### *Ֆինանսական ակտիվներ*

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը, կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

վերանում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը,

Բանկը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն անողջութային և ժամանակին փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն,

և Բանկը կամ (ա) փոխանցում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, այլ փոխանցում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Եթե Բանկը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա ակտիվը հաշվառվում Բանկի շարունակվող մասնակցության համապատասխան ֆինանսական ակտիվում: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև, ապա այդպիսի մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ ակտիվի հաշվեկշռային արժեք կամ Բանկի կողմից փոխհատուցվելիք առավելագույն գումար:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի դուրսգրված վաճառքի և/կամ գնման օպցիոնի ձև (ներառյալ դրամային և նման պայմաններով օպցիոնները), մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Բանկը կարող է հետ գնել փոխանցվող ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված դուրսգրված վաճառքի օպցիոնի (ներառյալ դրամային և նման պայմաններով օպցիոնները), երբ շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցվող ակտիվի իրական արժեքը կամ օպցիոնի կատարման գինը:

### *Ֆինանսական պարտավորություններ*

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ այն մարվում է, չեղյալ է համարվում կամ լրացել է դրա ուժի մեջ մնալու ժամկետը:

Փոխառուի փոխատուի միջև պարտքային գործիքների փոխանակումը, որոնց պայմաններն էականորեն տարբերվում են մինյանցից, կամ կատարվում է գործող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխություն, իրենից ներկայացնում է հին պարտքի մարում, որը պետք է համեցնի այդ պարտքի ապաճանաչմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը, իսկ տարբերությունը համապատասխան հաշվեկշռային հաշվի հետ ձևակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

**Ծանոթագրություն 37. «Գրավադրված ակտիվներ»**

Բանկը 31.03.15թ.-ի դրությամբ գրավադրված ակտիվներ չունի

31.03.15թ.-ի դրությամբ գրավադրված արժեթղթեր			
Թողարկում	Ծավալ	Վերագնահատված արժեք	Վերջնական մարման անսաթիվը

**Ծանոթագրություն 38. «Ընդունված գրավ»**

Վարկային պորտֆելի կառուցվածքը ըստ ստացված գրավների

	<b>31.03.15</b>	<b>31.12.14</b>
Պետական արժեթղթեր		
Անշարժ գույքի գրավադրմամբ	74,531,596	76,114,466
Ձեռնարկությունների երաշխավորությամբ		
Շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավադրմամբ	642,691	658,982
Կառավարության կողմից տրամադրված երաշխիքներ		
Հիմնական միջոցների /շարժական գույք/ գրավադրմամբ	2,615,978	3,035,772
Դրամական միջոցների գրավադրմամբ	3,241,288	3,025,138
Այլ գրավով	36,856,021	37,599,842
<b>Ընդամենը</b>	<b>117,887,574</b>	<b>120,434,200</b>

**Ծանոթագրություն 39. «Պարտավորությունների չկատարում/խախտում»**

**Բանկում առկա չեն պայմանագրային պարտավորությունների խախտման դեպքեր:**